ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

25. 03. 2023 *ք. Իջևան*

Մասնակցում էր ֆակուլտետի գիտական խորհրդի 24 անդամներից 15-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. «Իջևանի հասարակական-մշակութային կյանքը առօրեականության համատեքստում 1920-70-ական թվականներին» թեմայով ԵՊՀ ԻՄ-ի ներքին դրամաշնորհային ծրագրի կատարման ընթացքի (2023 թ. նոյեմբեր-փետրվար) մասին (զեկուցող՝ **Վ. Պողոսյան**):
2. Հեռակա ուսուցման «Պատմություն» կրթական ծրագրի 5-րդ կուրսում վերականգնված ուսանող Սերյոժա Ջոնիկի Հովակիմյանի ավարտական աշխատանքի թեմայի («Բագրատունյաց թագավորության թուլացումը և տրոհումը. Սյունիքի թագավորությունը») հաստատում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
3. 2022-2023 ուսումնական տարվա հեռակա ուսուցման I կիսամյակի քննաշրջանի 2-րդ լուծարքային շրջանի ընթացքի մասին (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
4. Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների և պաշտպանությունների մասին (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
5. 2022-2023 ուստարվա II կիսամյակի 1-ին ընթացիկ ստուգումների և քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի մասին զեկուցող Վ. Պողոսյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրել են Իջևանի խորհրդային առօրեականության դրսևորումները, առանձնացրել են աղբյուրագիտական բազան, կազմել առանձին ցանկեր, հատկապես մեծ նշանակություն են տվել խորհրդային շրջանում հրատարակված մամուլի և լուսանկարների ուսումնասիրությանը, մասնավորապես՝

- Բացահայտել են ընտանեկան հարաբերությունների, երեխաների դաստիարակության, կրթության դերակատարության և քաղաքացիների վերարտադրողական վարքագծի առանձնահատկությունները նշված ժամանակահատվածում:
- Բնութագրել են 1930-1970-ական թվականներին իջևանաբնակների կողմից ընդունված մշակութային և սոցիալական կյանքի նոր ձևերը, քաղաքային բնակչության հիվանդացության մակարդակը 1950-1970-ական թթ. և բժշկական օգնության որակը:
- Կարևորել են կրթամշակութային կենտրոնների դերակատարումը Իջևանի զարգացման նախաարդյունաբերականից արդյունաբերական տիպի անցման շրջանում:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված ուսումնասիրությունից ելնելով՝ հանգել են այն եզրահանգման, որ խորհրդային իշխանության 70 տարիների ընթացքում Խորհրդային Հայաստանը և նրա առանձին շրջաններ ունեցել են տնտեսական, ժողովրդագրական, մշակութային և հասարակական մեծ առաջընթաց: Այս նույն ժամանակահատվածում ձևավորվել են Իջևանի քաղաքային տեքստն ու միջավայրը, պայմաններ են ձևավորվել մշակութային և հասարակական կյանքի զարգացման համար:

Հետազոտության նյութերը կարող են օգտագործվել գիտական և ուսումնական գործունեության մեջ, հատուկ դասընթացներում, Հայաստանի հասարակական պատմության, առօրեականության, մշակույթի պատմության վերաբերյալ նոր աշխատություններ գրելիս:

«Իջևանի հասարակական-մշակութային կյանքը առօրեականության համատեքստում 1920-1970-ական թվականներին» թեմայով հետազոտական աշխատանքի շրջանակում պատրաստվել են հրապարակման հետևյալ հոդվածները.

1. Պողոսյան Վ., Մկրտումյան Ա., Իջևանի ժողովրդագրական պատկերը 1920-30-ական թվականներին, Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու, թիվ Ը, 2022, 257-272 էջեր:
2. Պողոսյան Վ., Գրիգորյան Ն., Իջևանի քաղաքային տարածության ձևավորման առանձնահատկությունները, Լրատու Մեսրոպ Մաշտոց համալսարանի, 2023, (գրախոսության փուլում):

3. Պողոսյան Վ., Գրիգորյան Ն., Մկրտումյան Ա., Ստեփանյան Մ., Խորհրդային դպրոցն ու կրթական համակարգի առօրեականության չափումը (Իջևանի դպրոցաշինության օրինակով), Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Պրակ Ա, 2023 (գրախոսության փուլում):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

«Իջևանի հասարակական-մշակութային կյանքը առօրեականության համատեքստում 1920-70-ական թվականներին» թեմայով ԵՊՀ ԻՄ-ի ներքին դրամաշնորհային ծրագրի կատարման մասին զեկուցող Վ. Պողոսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն և իրականացված աշխատանքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Նա մասնավորապես նշեց, որ 2022-2023 ուստարվա II կիսամյակում հեռակա ուսուցման «Պատմություն» կրթական ծրագրի 5-րդ կուրսում վերականգնվել է ԵՊՀ ԻՄ-ի նախկին ուսանող Սերյոժա Ջոնիկի Հովակիմյանը: Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի կողմից նրան տրվել է ավարտական աշխատանքի հետևյալ թեման՝ «Բագրատունյաց թագավորության թուլացումը և տրոհումը. Սյունիքի թագավորությունը», որը, կարգի համաձայն, պետք է հաստատվի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել հեռակա ուսուցման «Պատմություն» կրթական ծրագրի 5-րդ կուրսում վերականգնված ուսանող Սերյոժա Ջոնիկի Հովակիմյանի ավարտական աշխատանքի թեման («Բագրատունյաց թագավորության թուլացումը և տրոհումը. Սյունիքի թագավորությունը»):

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի մասին Կ. Պողոսյանը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարվա հեռակա ուսուցման I կիսամյակի քննաշրջանի 2-րդ լուծարքային շրջանը սկսվել է ս.թ. մարտի 22-ին և կտևի մինչև մարտի 28-ը:

2-րդ լուծարքային շրջան չունեն «Պատմություն» և «Հոգեբանություն» կրթական ծրագրերի 1-ին և «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 1-ին և 5-րդ կուրսերը:

Լուծարքներն իրականացվում են պատշաճ կարգով, ըստ ժամանակացույցի և նախապես ձևավորված հանձնաժողովներով: Խախտումներ չեն արձանագրվել:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2022-2023 ուսումնական տարվա հեռակա ուսուցման I կիսամյակի քննաշրջանի 2-րդ լուծարքային շրջանի ընթացքի մասին Կ. Պողոսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ ևս զեկուցեց դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը և նշեց, որ ֆակուլտետում 7 կրթական ծրագրերի գծով ավարտական աշխատանքների պաշտպանությունները կիրականացվեն ս.թ. մայիսի 6-30-ն ընկած ժամանակահատվածում:

Ըստ կարգի՝ ավարտական աշխատանքների պաշտպանություններից առնվազն 2 շաբաթ առաջ պիտի իրականացվեն նախապաշտպանությունները:

Պաշտպանությունների իրականացման համար ամբիոնների առաջարկների հիման վրա ձևավորվել են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերը, որոնք ներկայացվել են տնօրենի հաստատմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Ավագյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների և

պաշտպանությունների մասին Կ. Պողոսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 5-րդ հարցի մասին զեկուցող Կ. Պողոսյանը նշեց, որ 2022-2023 ուստարվա II կիսամյակի 1-ին ընթացիկ ստուգումները և քննությունները առկա ուսուցման համակարգում կիրականացվեն ս.թ. ապրիլի 4-8-ը, հեռակա ուսուցման համակարգում՝ ապրիլի 14-22-ը:

Ֆակուլտետում իրականացվել են նախապատրաստական անհրաժեշտ աշխատանքներ: Կազմվել են ընթացիկ ստուգումների և քննությունների կազմակերպման ժամանակացույցները, դրանք տրամադրվել են ամբիոններին՝ քննարկման և վերանայման նպատակով: Դեկանատի կողմից հաշվարկվել և Ուսումնամեթոդական վարչությանն է ներկայացվել գրավոր քննությունների համար անհրաժեշտ տետրերի քանակը: Նախատեսվել է մեծ կուրսերի գրավոր քննություններն անցկացնել տեսախցիկներով կահավորված լսարաններում: Ֆակուլտետը պատրաստ է քննաշրջանի իրականացմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Ավագյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2022-2023 ուստարվա II կիսամյակի 1-ին ընթացիկ ստուգումների և քննությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Կ. Պողոսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Վանյան